ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ
ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ
ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ
ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա-ԻՆ (Անթիլիաս),

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ, ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Երուսաղեմ),

ԹՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ, ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Ստամբուլ),

ԲԱՐԵԽՆԱՄ ԲՈԼՈՐ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ
ԵՎ ԳԵՐԱՊԱՏԻՎ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻՆ:

Պարգևատուն բարյաց, իր անբավ ողորմությամբ անցյալ տարվա ընթացքում արժանի արեց մեր սուրբ եկեղեցին և մեր ժողովուրդը համայն՝ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, ապրելու և գործելու՝ խաղաղության և շինարար զարգացման պայմանների մեջ, իսկ այժմ քաղցրությամբ ու հոգու ցընծությամբ ողջունելու աշխարհաշեն ավետիսը Քրիստոսի հրաշալի ծննդյան: «Փառք, պատիվ և երկրպագութիւն՝ Փրկչին մերոյ՝ Միածին Որդւոյն Աստուծոյ»:

Այս մեծ ավետիսը Մենք Ձեզ ենք բերում մեր երանելի Հոր՝ սուրբ Գրիգոր Լուսավորչի գահից, օրհնելով ձեր թեմը և ձեր եկեղեցիները, ձեր թեմական ու ծխական ժողովներն ու համայն Մեր հավատացյալ զավակներին, մաղթելով բոլորին արևշատ երջանիկ ու խաղաղ տարիներ, աստվածահաճո և ազգաշեն Ձեր գործոց լիակատար հաջողությամբ:

Քրիստոսի ծննդյան շնորհներով, թող խաղաղություն լինի աշխարհի վրա և հաճություն ի մարդիկ:

Շնորհավոր Նոր տարի և սուրբ Ծնունդ:

Խաղաղություն և սեր և երկնառաք բարիք եղիցին ընդ Ձեզ այժմ և հավիտյան, ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

*
* *

Նմանօրինակ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կենտրոնական վարչությանց և խորհուրդներին, Հայկական բարեգործական ընդհանուր միության Կենտրոնական վարչությանը (Նյու-Յորք), Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության Կենտրոնական խնամակալությանը (Լիսաբոն), Աբգարյան ավանդի և ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Լոնդոն), ս. Էջմիածնի հանձնախմբին (Բեյրութ), Վարդանանց ասպետներին (Ռոտերտաուն), Կալկաթայի հայկական ընկերության վարչությանը (Կալկաթա), գաղութային վարչություններին, հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններին, Մայր Աթոռի և հոգևոր ճեմարանի բարերարներին և ծանոթ ազգային դեմքերին:

*
* *

Շնորհազարդ Եղբայր ի Քրիստոս,

Նոր տարվան և Փրկչի ս. Ծննդյան հրաշալի տոնի առթիվ Ձերդ Ս. Օծության կներկայացնենք Մեր սրտալից և ջերմ շնորհավորություններն ու լավագույն մաղթանքները:

Ի խորոց սրտի կաղոթենք, որ բարձրյալն Աստված պարգևե Ձեզի քաջառողջ և երջանկալից երկար կյանք և լիակատար հաջողությամբ պսակե Ձեր եկեղեցանվեր բոլոր ճիգերն ու ջանքերը:

Թող Աստված հարցն մերոց անշարժ և անսասան պահե ու պահպանե Հայց. ս. եկեղեցին և բարգավաճ ու ծաղկյալ կյանք պարգևե հավատացյալ հայ ժողովուրդին ի ափյուռս աշխարհի:

Մնամ եղբայրական սիրո ջերմ ողջունիվ, աղոթակից՝

ԽՈՐԵՆ Ա.

Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո

Անթիլիաս

*
* *

Նոր տարվա և ս. Ծննդյան տոների ուրախ առթիվ խորին հարգանքով ներկայացնում ենք Ձեզ, Մեր և Սրբոց Հակոբյանց միաբանության անունից, սրտագին շնորհավորություններ և բարեմաղթություններ:

Թող ամենակարողն Աստված պարգևի Ձերդ Սրբության քաջառողջություն և բազում երջանիկ տարիների հաջողություն. բարօրություն ու անսասանություն՝ Մայր Աթոռ ս. Էջմիածնին:

ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Պատրիարք հայոց Երուսաղեմի

Երուսաղեմ

*
* *

Վեհափառ Տեր,

Աստվածահայտնությունը միշտ կրկնվող հուշարարն է աստղի խորհուրդին, այսինքն մեր չգոհացված պապակին արդարության և ճշմարտության: Մյուս կողմե մշտնջենական պատգամն է անհասանելի խաղաղության: «Անհասանելի» ըսինք խաղաղության համար, վասնզի պատմությունը կիսատ, մեր առօրյան կաղաղակե ու մարգարեն կհաստատե. «Եւ ասէին խաղաղութիւն, խաղաղութիւն, եւ ոչ գոյր խաղաղութիւն» (Երեմ. Ը 11): Այս պատգամները մեզի կուգան ոչ միայն մեր սրտերուն մեջ այլևս տարրացած բաղձանքներեն, այլ հատկապես մանկացող Աստուծո մը ծնունդին հետ կապված սրտառուչ դրվագներեն:

Ուրեմն մեր առաջին մաղթանքն է, որ շուտ մոռացող մարդկությունը հիշեր այս փրկարար պատգամները նաև տարվան ուրիշ օրերուն մեջ, որոնք զմեզ գործնականորեն դեմ հանդիման կբերեն արդարության, ճշմարտության և խաղաղության մեկտեղումին: Առանց առաջին երկուքին վերջինը անկարելի է, որ տիրապետե երկրի վրա. վասնզի արդարության հետ համբուրվելով է, որ կբեղմնավորվի խաղաղությունը: «Արդարութիւն եւ խաղաղութիւն համբուրեսցին» (Սաղմ. ՁԴ 11):

Ու այս բոլորը կիրականանան միայն այն ատեն, երբ համայն մարդկությունը մտնե մականին ներքև Խաղաղության հավիտենական իշխանին:

Հանգրվանային այս տոներու առթիվ կուգանք համայնքովին նախ վերանորոգելու մեր սերը և հարգանքը Վեհիդ նկատմամբ և մեր հարումը Մայր Աթոռին հանդեպ: Ապա սրտագինս շնորհավորելով կմաղթենք Ս. Օծությանդ շնորհավոր Ամանոր և շնորհաշատ տարիներ:

Մատչելով ի համբույր Օծելույդ ս. Աջին, խոնարհ աղոթակից՝

ԾՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Պատրիարք հայոց Թուրքիո

Ստամբուլ